

## ՀԱՅՈՑ ՏՈՐՔ (ՏՈՒՐՔ) ԱՍՏԾՈՅ ՏԵՂՆ ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայոց Անգղ աստծոյ մասին յիշատակում է Մովսէս Խորենացին՝ Անգեղ ձեւով, թէպէտ փորձում է այդ անունը բացատրել նրա դժնի՝ ոչ գեղեցիկ արտաքինով։ Տորք Անգեղը Հայկ նահապետի թռոան՝ Պասքամի որդին է՝ «զայր խոժոռագեղ եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակամիթ, խորակ եւ դժնահայեաց վիթխարի հասակաւ եւ ուժով»։ Նրան Հայոց Վաղարշակ արքան Հայոց արեւմտեան սահմանների կուսակալ է նշանակում։ Նրա մասին երգեր են երգել, ասելով, թէ որձաքար ապառաժները ճեղքում էր, եղունգներով տաշում, տախտակներ ձեւացնում եւ դարձեալ եղունգներով դրանց վրայ արծիւներ էր գծում եւ էլի նման բաներ։ Մի անգամ Պոնտոս ծովի ափին Հանդիպել էր թշնամինների նաւերին եւ յարձակուել դրանց վրայ։ Տեսնելով, որ չի կարողանում հասնել, նրանց ետեւից բլրածեւ ժայռեր էր չպրտել։ Առաջացած ալիքները նաւերից շատերին ընկղոմել էին ջրի տակ<sup>1</sup>։

Է. Խ. Պետրոսեանը Տորք Անգեղին համեմատել է յունական Թալոսի հետ<sup>2</sup>։ Թալոսի մասին անտիկ հեղինակների բնագրերն անմիջաբար մէջբերել է Ա. Ֆ. Լոսեւը։ Դրանցից հետեւեալ տեղեկութիւնները կարելի է առանձնացնել. ըստ Ապոլոդորոսի, ոմանք ասել են, թէ Թալոսը պղնձէ մարդ էր, ոմանք էլ՝ ցուլ։ Նա պահպանում էր Կրետէ կղզին։ Մի օր տեսնելով, թէ ինչպէս է կղզուն մօտենում արգոնաւորդների նաւը, սկսել էր քարեր չպրտել։ Նա մեռել էր կախարդուհի Մեղեայի ձեռքով։ Ոմանց կարծիքով, Մեղեան ինչոր խոտաբոյսի միջոցով խելացնորութեան էր հասցրել Թալոսին, իսկ ոմանք էլ ասում են, թէ յայտնի աղեղնաւոր Պետ-

<sup>1</sup> Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, Բ. Ը:

<sup>2</sup> Петросян Э. Х., Боги и ритуалы Древней Армении, Ер., 2004, с. 95-102.

տը նետով դիպել էր նրա գարշապարին<sup>3</sup>: Այս պատմութեան մէջ Թալոսն, իրօք, Տորք Անգեղին նոյնական է ոչ միայն վիթխարի ուժով, այլեւ սահմանապահի իր պաշտօնով, թշնամու վրայ քարեր նետելով:

Տորք Անգեղն ինչ-որ խորհրդաւոր արհեստ ունի, ինչի վերաբերեալ իսորենացին կցկտուր տեղեկութիւններ է յայտնել՝ ասելով, թէ ժայռափորագրութեամբ էր պարապում: Արհեստագործ Թալոսի մասին տեղեկութիւններ է հաղորդում դարձեալ Ապոլոդորոսը, տալով նրա մէկ այլ՝ Պերդիկ անունը: Պերդիկ-Թալոսը լաւագոյն ճարտարապետ եւ քանդակագործ Դեդալոսի քրոջ որդին էր: Նա օձի ծնօտ էր գտել եւ դրանով սղոցել բարակ տախտակը՝ այդպիսով կատարելով սղոցի գիւտը: Հստ Դիոդորոս Սիկիլիացու, Թալոսը հնարել էր ոչ միայն սղոցը, այլեւ բրուտի անիւը, կարկինը եւ մեծ փառքի էր արժանացել<sup>4</sup>:

Հեսիքոսը յայտնել է, որ Թալոսը Զեւսն էր Կրետէում, միեւնոյն ժամանակ՝ Արեւը: Հստ Պաւսանիասի, Թալոսի հօր անունը Կրետէ էր, իսկ Թալոսի որդին Հեփեստոսն էր: Այս կապակցութեամբ նա կասկած է յայտնել, քանի որ «Հելենների լեզենդները շատ դէպերում իրար հակասող են, յատկապէս ծննդաբանութեան հարցերում»: Միեւնոյն ժամանակ հաղորդել է, թէ Թալոսը էնոպիոնի (= գինի) որդին էր<sup>5</sup>:

Հոմերոսի «Ոդիսականի» սքոլիաներում (մեկնութիւններում) ասւում է, որ Թալոսը Կրետէի վրայ յարձակուողներին պատճում էր իւրովի: Նա ցատկում էր կրակի մէջ եւ շիկանալով, խեղդում էր թշնամիներին՝ գրկախառնուելով նրանց<sup>6</sup>: Այսինքն՝ Թալոսը կրակի հետ ունեցած իր կապով յիշեցնում է ոչ միայն Հեսիքոսի ասած Արեւին, այլեւ դարբնութիւնը: Հստ Ապոլոդորոսի, Թալոսը պատկանում էր մարդկանց պղնձէ սերնդին<sup>7</sup>, այսինքն՝ պղնձի յայտնաբերման, հետեւաբար՝ դարբնութեան սկզբնաւորման ժամանակաշրջանին<sup>8</sup>:

<sup>3</sup> Лосев А. Ф., Античная мифология в её историческом развитии, М., 1957, с. 136.

<sup>4</sup> Там же, с. 139.

<sup>5</sup> Там же, с. 135-136.

<sup>6</sup> Там же, с. 136-137.

<sup>7</sup> Там же, с. 136.

<sup>8</sup> Կրետական բոլոր խոշոր քաղաքները մ.թ.ա. II հազարամեակում ծովափից բաւականին հեռու են կառուցուած եղել, ինչն այդ շրջանում ծովահէնու-

Եթէ, ըստ Հեսիքոսի, Թալոսի որդին դարբին աստուած Հեփեստոսն է, ապա յունական «Պալատինեան անթոլոգիայում» Մեղեան տապալում է «պղնձէ Թալոսին, որին վարպետօրէն պատրաստել էր «հօրից զրկուած» եւ «մօրից շպրտուած» Հեփեստոսը: Թալոսն, ըստ Ապոլոդորոսի եւ Հիւգինոսի, նոյն բախտին էր արժանացել՝ ինչ Հեփեստոսը, քանի որ Դեղալոսը տեսնելով, որ Թալոսը բնական ընդունակութիւններով գերազանցում է իրեն, նրան նախանձից ցած էր գլորել Ակրոպոլիսի կամ իր տան կտուրից<sup>9</sup>: Հեփեստոսին նոյնպէս նախ մայրը՝ Հերան էր նրա վտիտ ծնուելու պատճառով ցած շպրտել Օլիմպոսից, այնուհետեւ հայրը՝ Զեւսը, քանի որ Հեփեստոսը փորձել էր համոզել իրեն՝ պատժելու Հերային: Հեփեստոսը թէաէտ երկու ոտքից կաղ էր դարձել, սակայն հսկայական ուժ ունէր<sup>10</sup>, ինչպէս Թալոսը:

Ըստ Օփիդիոսի, երբ Դեղալոսն Ակրոպոլիսից («Միներվայի ամրոցից») ցած էր նետել Թալոսին, վերջինս կաքաւ էր դարձել: Այս վկայութիւնը համընկնում է Թալոսի ապոլոդորոսեան Պերդիկ(ս) անուանը, որը յունարէնում «կաքաւ» է նշանակում<sup>11</sup>: Ռ. Գրէյվսը Թալոսին եւ Հեփեստոսին նոյն կերպարն է համարել՝ հաշուի առնելով ոչ միայն այն, որ երկուսն էլ ցած էին շպըրտուել բարձունքից, այլեւ, որ երկուսն էլ կաղում էին: Բանն այն է, որ կաքաւը հնագոյն մայր աստուածուհու թուչունն էր, որի կերպարը խաղացում էր Միջերկրական ծովի ամբողջ արեւելեան մասում գարնանային օրահաւասարի կապակցութեամբ կազմակերպուող տօներում: Պարում էին այնպիսի պարեր, որոնք նմանակում էին կաղացող կաքաւի քայլքը<sup>12</sup>:

Թալոսն ուրեմն, կաղացող թուչնի՝ կաքաւի կերպարանք է ունեցել: Կաքաւը հայ հին մատենագրութեան մէջ էլ կապում է պարի եւ երգի հետ: Յայտնի են, օրինակ՝ «Վասն կահաւածեւ

թեան խիստ տարածուած լինելու հետ էր կապուած (Древняя Греция, М., 1956, с. 24): Այդ պատճառով էլ կրետէի դիցարանութիւնը կղզու պահակ էր կարգել պղնձէ Թալոսին, այսինքն՝ դարբինների աստծուն, որոնց կռած մետաղեայ գէնքերից էր կախուած պետութեան անվտանգութիւնը:

<sup>9</sup> Лосев, с. 141, 139-140.

<sup>10</sup> Грэйвс Р., Мифы Древней Греции, М., 1992, с. 61-62.

<sup>11</sup> Лосев, с. 140, 130.

<sup>12</sup> Грэйвс, с. 36.

պարուցն», «Պար առեալ կաֆաւաձեւ» կամ «Պար իսկ՝ կաֆաւումն, եւ երգ է բոլորովին» արտայայտութիւնները<sup>13</sup>:

Բայց թալոս-Հեփեստոսի կերպարանափոխումներից է ոչ մի-այն թուչունը, այլեւ օճը: Թալոսը կիսով չափ օճ էրեքթեւսի շա-ռաւիղներից էր, ինչպէս Դեղալոսը<sup>14</sup>: Դիոդորոս Սիկիլիացու պատմելով, երբ թալոսին հողին յանձնող Դեղալոսին հարցրեցին, թէ ու՞մ է թաղում, պատասխանեց՝ «օճին»: Դիոդորոսն ա-սում է. «Կարելի է, քերեւս, տարօրինակ համարել, որ նոյն կենդանու միջոցով, որով նա (Թալոսը) յղացաւ սղոցի կառու-ցուածքը, հենց նրա միջոցով էլ կատարուեց իրագործուած սպանութեան փաստի նանաչումը»<sup>15</sup>: Հեփեստոսի՝ երկու ոտքից կաղ լինելը (այսինքն՝ ոտքեր չունենալը) նոյնպէս նրա քտոնիկ՝ օ-ձային կերպարանքի վկայութիւններից է: Նրա դարբնոցը (զնդա-նը) ստորերկրայքում էր, ինչպէս կաղ Դեւն է Տարոնի իննակ-նեայ վայրում և. Կարապետի վանքի մոխիրները գետնի տակով հասցնում մինչեւ Փրեբաթման<sup>16</sup>: Նա գիտէ ստորերկրայքի ուղի-ները: Հեփեստոսն էլ գիտէ այդ մասին, քանի որ ստորերկրայ-քից՝ խաղողի վազի տակից կաթի, գինու, իւղի եւ ջրի աղբիւր-ներ էր բխեցրել Կողքիսի արքայի համար<sup>17</sup>: Կաղ Դեւն էլ այն տեղանքում է գործում, որն իննակնեայ՝ ինն աղբիւր բխող ա-նունն է կրում:

Թալոսը յայտնագործել էր նաեւ կարկինը, որը պղնձագործ դարբնի արհեստի անբաժանելի գործիքն է եղել: Դա անհրա-ժեշտ էր սաղաւարտ, դիմակ, թաս պատրաստելիս, ճգրիտ շրջա-նագիծ անցկացնելու համար: Ահա թէ ինչու է Ռ. Գրէյվսը դարբնութեան հետ կապում թալոսի միւս՝ կիրկին (կարկին) ա-նունը, որ յունարէն «կլոր» է նշանակում՝ միեւնոյն ժամանակ ցոյց տալով Արեւի շրջանաձեւ ընթացքը:

Թալոսը նոյնական է Հեփեստոսին, իսկ Հեփեստոսը՝ Տարօ-նի կաղ Դեւին<sup>18</sup>: Հեփեստոսը Զեւսի օգնականն է եւ իր ստոր-

<sup>13</sup> Նոր բառգիրք հայկագեան լեզուի, հա. I, Եր., 1979, էջ 1080.

<sup>14</sup> Գրեյվս, с. 239-240.

<sup>15</sup> Լոսև, с. 139.

<sup>16</sup> ՍՐՈՒԱՆՁՏԵՍՆ Գ., Երկեր, հա. I, Եր., 1978, էջ 75.

<sup>17</sup> Միфы народов мира (այսուհետեւ՝ МНМ), т. I, М., 1991, с. 299.

<sup>18</sup> Հեփեստոս - Կաղ Դեւ նոյնացում անցկացրել է նաեւ Ս. Բ. Յարութիւննեանը - ՅԱ-ՐՈՒԹԻՒՆԸՆ Ս. Բ.. Հայ առանպելանանութիւն, Բէյրութ, 2000, էջ 140-141.

երկրեայ դարբնոցում կռում է նրա կայծակները: Նա նաեւ կողքիսի արքայ Այխոսի համար պղնձէ ցուլեր էր կոփել<sup>19</sup>: Ահա թէ ինչու է Հեսիքոսը Թալոսին կրետէի Զեւս եւ միենոյն ժամանակ Արեւ համարել, իսկ Ապոլոդորոսը վկայել է նրա մէկ այլ ցլային կերպարանքի մասին: Եւ Արեւը, եւ ցուլը, եւ կայծակները Զեւսին են բնութագրում՝ Հեփեստոս-Թալոսին համեմատելի դարձնելով նրա կերպարին:

ի. Խ. Պետրոսեանը Թալոսի կերպարը «Թալալոս(ց)» անուամբ ցոյց է տուել հայ ազգագրութիւնից յայտնի գրաւոր եւ բանաւոր բազմաթիւ վկայութիւններում: Թալալոսը չար ոգի է համարուել՝ հրէշ, որի անունը հանդիպում է նաեւ մէկ այլ ոգու՝ Ալալոսի հետ: Նրա անունների կողքին լիշտում են նաեւ կիրակոսը, Թորոսը, Ստեփանոսը եւ այլք, որոնց ժողովուրդն իր հմայախօսութիւններում դիմում է մանուկներից չարը վանելու ակնկալիքով: Մեծ պասի առաջին շաբաթուայ շաբաթ օրը, որ կոչուել է «Թալալոսի կիրակի», նուրիրուել է մանուկների պահպանութեանը մանկական հիւանդութիւններից, յատկապէս «Թալալոց» կոչուած շնչարգելութիւնից: Տարօնում հիւանդ մանկանը տարել են անցք ունեցող «Թալալոց» անունով քարի մօտ, մանկան շապիկը պատուել են, պտտել նրա գլխի վրայով եւ անցկացրել ծակ քարի միջով: Այնուհետեւ ճաշ են եփել եւ կերակրել հիւանդ երեխային: Վասպուրականում, Արտամետ գիւղի այգիների մօտ յայտնի է եղել սուրբ Թալալոս ուխտատեղին, ուր այցելել են դողէրոցքով հիւանդները: Բասենում մի հին ուռենի է եղել՝ «Թալալոցի ծառ» անուամբ: Այս ծառի տակ են բուժուելու նպատակով պառկեցրել ընկնաւորներին: Շատ շրջաններում Թալալոսի կիրակիին արգելուած է եղել աշխատել, այլապէս ընտանիքի անդամներից մէկը կը հիւանդանար ընկնաւորութեամբ: Արգելքը խախտելիս, կարելի էր խելագարուել: Թալալոսի շաբաթ օրը կրծքի երեխայ ունեցող մայրերը զերծ էին մնում որոշակի սնունդ գործածելուց եւ երեխաներին լողացնելուց<sup>20</sup>:

Մանուկներին վնասելու գործառոյթով հայոց Թալալոսը նոյնական է փիւնիկեցիների եւ կարթագենցիների մէջ պաշտուող, մանուկների պատուհաս պղնձէ Թալոսին, որին վերջիններս Քրոնոս էին անուանում: Նրա արձանի ձեռքերն առաջ էին պարզուած: Դրանց տակ բովիչ կար: Երբ կամենում էին այդ աստ-

<sup>19</sup> Միфы народов мира, т. I, с. 299.

<sup>20</sup>Петросян, с. 80-84 եւ յղումները:

ծուց մի բան խնդրել, բովիչի մէջ մանուկներ էին խարկում՝ նույի-րաբերելով Քրոնոս-Թալոսին<sup>21</sup>: Թւում է, թէ այս բովիչը, որ սովորաբար կլոր է լինում, իր տեսքով կարող է, իրօք, համեմատելի լինել Արեւին, ինչպէս որ Թալոսն է (Հեփեստոսը) համեմատուել Արեւի հետ: Հայ միջնադարեան պատմիչ Թովմա Արծրունին էլ հեփաբաների թագաւոր Մանեթոնին վկայակոչելով, Որմիզդ-Զեւսից կրակը գողացած եւ մարդկանց տուած Հեփեստոսին ու Պրոմեթեւսին Արեւ եւ Լուսին է անուանում<sup>22</sup>: Սակայն Թալոսի բովիչի Արեւ լինելու վարկածը չի կարող ամրապնդուել, քանի որ մեզ յայտնի չէ Քրոնոս-Թալոսին մանուկներ զոհաբերելու ծիսապաշտամունքային ճշգրիտ բովանդակութիւնը: Դրա փոխարէն յայտնի է, որ յոյների տիտան Քրոնոսը թշնամանք ունէր մանկանց նկատմամբ, քանի որ նոյնիսկ սեփական նորածիններին էր կուլ տալիս<sup>23</sup>: Դասական Յունաստանում նա մարմնաւորում էր Սատուրնոս մոլորակին: Յետագայում, ենթադրում է զրուանականութեան ազդեցութեամբ, սկսեց խորհրդանշել համապարփակ ժամանակը<sup>24</sup>: Իսկ ժամանակն իրականում էլ ամէն ինչի հայրն է եւ ամէն ինչի կործանողը:

Քրոնոսը հռոմէական Սատուրնոսն է, որը միջնադարեան աստղագիտական գրականութեան մէջ (ԺԶ. դ.) պատկերուել է Ցուլ եւ Ջրհոս համաստեղութիւնների հետ միասին: Նա մօրուքաւոր, ամրակազմ ծերունի է: Զախ ձեռքով մանկան է գրկել, աջով բռնել է մանգաղ<sup>25</sup>: Այնքան էլ հաւատ չի ներշնչում, թէ խոտհարփի այդ գործիքը խաղաղ նպատակով է ձեռքն առել: Նկարում բուսականութեան հետք անգամ չկայ, ուստի, բնական է կարծել, որ նպատակ ունի երեխայի վրայ գործադրել: Քրոնոս-Սատուրնոսը ժամանակի մարմնաւորումն է, ուրեմն, նկարում նա պէտք է որ Լուսնին մարմնաւորէր, որի խորհրդանիշը մանգաղն է (Նորալուսին կամ Վերջալուսին, այսինքն՝ Լուսնի

<sup>21</sup> Лосев, с. 137-138.

<sup>22</sup> ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ, Պատմութիւն Արծրունեաց տան, Եր., 1985, I, գ:

<sup>23</sup> Грейвс, с. 25.

<sup>24</sup> Саплин А. Ю., Астрологический энциклопедический словарь, М., 2001, с. 246.

<sup>25</sup> Там же, с. 346.

աճման փուլից մինչեւ նուազումը): իրականում էլ հնում ժամանակը Լուսնի փուլերով էր չափւում<sup>26</sup>:

Իրանցիները երկու Զրուան-Քրոնոս էին ճանաչում. մէկը՝ Սատուրնոս մոլորակը<sup>27</sup>, միւսն ակնյայտօրէն՝ Լուսինը, քանի որ նրա մասին Աւեստայում ասւում էր, թէ «ինքն է իրեն գոյացնողը»<sup>28</sup>: իսկ ինքն իրեն գոյացնողն աստղային երկնքում Լուսինն է, որ պարբերաբար մաշւում (մեռնում) եւ լրանում է (յարութիւն է առնում): իրանցիների մէջ Զրուաններից մէկն Աքարանան էր (Անվերջ ժամանակը), միւսը՝ Դարդահւադատան (Վերջաւոր ժամանակը): Դարդահւադատային վերապահում էր ժամանակի հաշումը՝ աշխարհի սկզբից մինչեւ կործանումը, որը պէտք է տեղի ունենայ<sup>29</sup>:

Ամփոփենք ուրեմն, Թալալոս-Հեփուեստոսն օծ է եւ կաքաւ (դարբին): Համեմատելի է Արեւին եւ Լուսին, եթէ ոչ Լուսնի կերպարի դրսեւորումն է: Հետաքրքիր է, որ յունական դիցաբանութեան մէջ ժամանակի, այսինքն՝ Լուսնի հետ է աղերսւում նաեւ Հեփեստոսի մայր Հերան, իբրեւ Մայր աստուածուհի, որի դայեակները մանուկ հասակում Տարուայ եղանակներն էին<sup>30</sup>: Մայր աստուածուհու պաշտամունքի սպասաւորներն էլ, ինչպէս ասացինք, գարնանային օրահաւասարի տօներին կաքաւի պար էին պարում, որն իր կաղ քայլքով դարբնի թռչնային կերպարանքն է ներկայացնում տարուայ կոնկրետ ժամանակահատուածում՝ գարնանամուտին: Այսինքն՝ դարբինները (կաքաւողները) իդական Լուսնի պաշտամունքի սպասաւորներն են: Նրանք այդպիսի դեր ունէին նաեւ հայոց Մայր աստուածուհի Անահիտի պաշտամունքում՝ Անձեւացոց երկրի Դարբնաքար կոչուած տեղում, որի սրբարանը կործանեց Բարդուղիմէոս առաքեալն իր ձեռքի փոքր խաչի օգնութեամբ: Անահիտը հայոց մէջ նոյնպէս Լուսնի համարում է ունեցել<sup>31</sup>: Դարբնաց քարի մասին Մովսէս Խորենացին Սահակ Արծրունուն ուղղուած իր թղթերից մէկում

<sup>26</sup> МНМ. т. II, М., 1992, с. 143. ԱՃՍՐԵԱՆ ՀՐ., Հայերէն արմատական քառարան, հա. Ա, Եր., 1971, էջ 157-158:

<sup>27</sup> Ван-дер-Вадсен Б., Пробуждающаяся наука II. Рождение астрономии, М., 1991, с. 194-196.

<sup>28</sup> Церен Э., Лунный бог, М., 1976, с. 329.

<sup>29</sup> Саплин, с. 200.

<sup>30</sup> Грейвс, с. 35-36.

<sup>31</sup> ՄԵԼԻՔ-ՓԱԾԱՅԵՍԱՆ Կ., Անահիտ դիցուիու պաշտամունքը, Եր., 1963, էջ 68:

ասում է. «ուր դեւք բազումք բնակեալ պատրէին զմարդիկ տեղւոյն տուեալ դեղս ախտականս առ ի կատարել զպդութիւնս ախտից, կուանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք անդ առ քրային դեգերէին՝ առեալ չաստուածոցն ծրարս բարախածորս ի պատիր ախտիցն: Հասեալ Ս. Առաքեալն, հալածեաց զդարբինսն գործօնեայս չարին եւ զկուոսն փշրեաց, որ յանուն Անահտայ էր»<sup>32</sup>:

Հայկական ժողովրդական հէքիաթներից յայտնի է Սինան անունով վշտացած մի թագաւորի կերպար, որի կինը դաւաճանում է նրան օտար տղամարդու հետ<sup>33</sup>, ինչպէս Հեփեստոսի կին Աֆրոդիտէն է դաւաճանում իր ամուսնուն Արէսի հետ<sup>34</sup>: Սինանի անուան հիմքն ակնյայտօրէն Սին-Լուսին աստծոյ անունն է, որի պաշտամունքն առաւելաբար միջագետքեան աղբիւրներից է յայտնի<sup>35</sup>: Արդեօք, նա հէնց այն դարբին աստուածը չէ՞ր՝ Տորք Անգեղ-Թալալոս-Հեփեստոսը, որի արհեստը կրողները սպասաւորում էին Անահիտ-Լուսին պաշտամունքին: Տորքի անունը Խորենացուց վկայուած է նաեւ Տորք Ճեւով՝, իսկ «տոռք»-ը հայոց մէջ գորգագործական հաստոցի անունն է՝ «տոռք» կամ «դարգեահ»: Այս հաստոցն իր վրայ կապած բազմաթիւ թելերի հէնքով նոյնպէս առնչւում է ժամանակի, այսինքն՝ Լուսնի ըմբռնմանը, քանի որ թելն ինքնին ժամանակն է խորհրդանշում, ինչպէս հայոց մէջ է գործածական «կեանքի թելը (այսինք՝ ժամանակը) կտրուեց» դարձուածը: Հաստոցի անուան միւս՝ «դարգեահ» Ճեւը տեսնում ենք ժամանակը հաշուող իրանական Զրուանի Դարգահւադատա անուան մէջ: Ուրեմն, ի զուր չէ, որ փիւնիկեցիներն ու կարթագենցիները Թալոսին նաեւ ժամանակի աստուած Քրոնոս են ճանաչել: Յայտնի է որ Հեփեստոսն էլ օրփէսեան մի հիմնում Լուսին է հոչակուել եւ երկնային բոլոր լուսատուները միասին վերցրած՝ շողարձակող եւ ամէն ինչ խժողով մի դեմոն<sup>37</sup>:

<sup>32</sup> Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Կոստանդնուպոլիս, 1843, էջ 294-295:

<sup>33</sup> Տե՛ս օրինակ՝ Հայ ժողովրդական հէքիաթներ, հա. V, Եր., 1966, էջ 28:

<sup>34</sup> MHM. T. I, c. 299.

<sup>35</sup> MHM. T. II, c. 198.

<sup>36</sup> ԽՈՐԵՆԱՑԻ, Ա, գ:

<sup>37</sup> MHM. T. I, c. 299-300.

Յունական այլ առասպելներ օգնում են որոշել Դարբին աստծոյ աստղային դրսեւորման տեղը համաստեղութիւնների շարքում: Առաջին առասպելը Տենեղոս քաղաքի արքայ Կիկնոսի (յունարէն՝ կարապ) եւ նրա որդի Տենեսի մասին է. Կիկնոսին ծնողները լքել էին ծովափում, երբ նա դեռ նորածին էր: Ձկնորմները երեխային յայտնաբերել էին այն ժամանակ, երբ կարապը հանգստացնում էր նրան: Կիկնոսն՝ ինքը ծովի ալիքներին էր յանձնել իր Տենես որդուն, որն ափ էր դուրս եկել Տենեղոս բնակավայրի մօտ: Իրականում սակայն Տենեսի հայրն Ապոլոնն էր: Տրոյական պատերազմում, երբ յունական նաւատորմը մօտենում էր Տենեղոսին, Տենեսը ժայռից պոկած մի հսկայ քար է շպրտում նաւերի վրայ: Աքիլեսն ափ իջնելով, սպանում է Տենեսին, իսկ յետոյ նաեւ որդու հետ հաշտուած Կիկնոսին: Տենեսը մեռնում է իր միակ խոցելի տեղին՝ գլխին հարուած ստանալով<sup>38</sup>:

Եթէ հաշուի առնենք, որ Տենեսի իսկական հայրն այս առասպելում Ապոլոնն էր, որի սրբազն թռչունն էր Կիկնոսին հովանաւորող կարապը, ապա կարելի ասել, որ թէ Տենեսը, թէ նրա հայրը համարուող Կիկնոս-կարապը միեւնոյն կերպարի տարբեր դրսեւորմներն են: Տիպաբանօրէն Տենեսը նոյնական է նաեւ հայոց Տորք Անգեղին եւ յունական Թալոսին, որը նոյնպէս թչնամի նաւերի վրայ քարելը էր շպրտում (ըստ Ապոլոնիուս Հռոդոսացու՝ ժայռաբեկորներ<sup>39</sup>): Թալոսը նոյնպէս մէկ խոցելի տեղ ունէր, ինչպէս Տենեսը:

Այս տեսակէտը հաստատում է տրոյական պատերազմի մէկ այլ դրուագով եւս, ուր Աքիլէսը սպանում է ուրիշ Կիկնոսի, որն անխոցելի էր: Աքիլէսը նրա դէմ ապարդիւն գործադրում է իր սուրն ու նիզակը: Նա յաջողութեան է հասնում միայն այն ժամանակ, երբ Կիկնոսը սայթաքում եւ քարին դիպչելով, ընկնում է: Աքիլէսը Կիկնոսին խեղդում է իր սաղաւարտի գօտիով: Պոսեյդոնը Կիկնոսի հոգին կարապ է դարձնում, որը թռչում եւ թաքնում է երկնքում<sup>40</sup>, այսինքն՝ համաստեղութիւն է դառնում:

Պարզ է, որ այս Կիկնոսը նոյնպէս Տենես-Թալոսի կերպարի վերարտադրութիւնն է: Կիկնոսին, որը կարծես պղնձից լինի, չեն վնասում ոչ սուրը, ոչ էլ նիզակը: Նա մեռնում է միայն

<sup>38</sup> Грейвс, с. 485.

<sup>39</sup> Аполлоний Родосский, Аргонавтика. Перевод, введение и примечания Г. Ф. Церетели, Тбилиси, 1964, IV, 1680.

<sup>40</sup> Грейвс, с. 488.

սայլթաքելուց եւ ընկնելուց յետոյ, ինչպէս Թալլոսը, որն ըստ Ապոլոնիուս Հռոդոսացու, մեռնում է այն ժամանակ, երբ ոտքը դիպչում է քարին, սայլթաքում եւ ընկնում է<sup>41</sup>:

Փաստենք ուղեմն. Թալլոս-Տորք Անգեղի թռչնային կերպարանքներից յոյներին յայտնի է եղել նաեւ կարապը:

Կարապ համաստեղութեան յունական անուանումը Cycnus է: Հայերին յայտնի եղել Անգղ (Անգղ)<sup>42</sup>, իսկ շումերներին՝ Լուսան-Անգղ (UD. KA. DUH. A)<sup>43</sup> անուններով: Այս Անգղը կարապ է դարձել յոյների միջնորդաւորմամբ, որոնք կարապն Ապոլոնի սրբազն թռչունն էին համարում<sup>44</sup>:

Շումերաաքքաղական դիցաբանութեան մէջ անգղը մահուան խորհրդանիշ էր (կապուած էր հանդերձեալ աշխարհի հետ): Պատկերում էր առիւծագլուխ, յովազագլուխ կամ լուսանագլուխ (զարդարուեստում դժուար է տարբերել) կերպարանքով: Այդ կերպարանքն Անզուդ հաւքին էր պատկանում, որ ապրում էր կենաց ծառի կատարին, ինչպէս կարապ համաստեղութիւնն է երկնքում ճիշտ այն տեղը զբաղեցնում, ուր երկնքի մի ծայրից միւսը ճգուող կաթնծիրը երկու ճիւղի է բաժանում: Պատկերում էր առիւծներին կամ եղջերուներին ճանկած: Առասպել-ներում երեւան էր գալիս որպէս միջնորդ երկնքի եւ երկրի, հետեւաբար՝ աստուածների եւ մարդկանց միջեւ<sup>45</sup>:

Անգղը հայոց լեզուին ծանօթ է նաեւ «անծեղ» ձեւով եւ համեմատում է սկիւթական «ագլո» բառին, որ կարապ է նշանակում: Յունարէն «ագգելոս»-ը հրեշտակի իմաստն ունի, իսկ պարսկերէն «ագգերոս»-ը՝ արքայական սուրհանդակի: Համարում է անգղաձեւ մի աստուած, որ աստուածների սուրհանդակի պաշտօն է ունեցել<sup>46</sup>: Նրա այդ պաշտօնը ցայտունօրէն պահպանուել է հայկական մի աւանդութեան մէջ, որը պատմում է, թէ ինչպէս տղամարդկանց՝ երկու կին առնելու սովորութեան առի-

<sup>41</sup> Аполлоний Родосский, IV, 1680.

<sup>42</sup> ԹՈՒՄԱՆԵԱՆ Բ. Ե., Հայ աստղագիտութեան պատմութիւն, Եր., 1964, էջ 211.

<sup>43</sup> Варден, с. 82.

<sup>44</sup> Саплин, с. 249.

<sup>45</sup> Афанасьева В. К., Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве, М., 1979, с. 86, 32. Мифы народов мира, т. I, с. 83.

<sup>46</sup> ԱՃԱՌԵԱՆ, էջ 184:

թով կանայք ժողով են անում եւ քննում, թէ ինչու՝ պէտք է նրանք երկու կի՞ առնեն, իսկ իրենք չպէտք է երկու ամուսին ունենան: Աղերսագիր են պատրաստում, կնքում եւ անծեղի ոտքին կապելով, ուղարկում են Աստծուն: Այդ օրուանից մինչեւ հիմա, երբ անծեղը սկսում է խօսել, կանայք իրար յուսադրելով ասում են. «Բարի լուր կայ, բարի լուր»<sup>47</sup>:

Քրիստոնէութիւնը մահուան աշխարհի հետ կապուող աստուածային սուրհանդակ Անգղ աստծուն վերամարմնաւորել է Սերովբէ եւ Քերովբէ հրեղէն հրեշտակների մէջ: Նրանք ճ թեւ ունեն, երկու դէմք՝ մէկն առիւծի, միւսը՝ մարդկային: Հսկում են դէպի կենաց ծառը տանող ճանապարհը: Դարբնի նման, ունելիով վերցնում են վառուող ածուխը եւ մարգարէի բերանին կպցնելով՝ մաքրագործում նրան: Մովսէսն իր հետ խօսող (այսինքն՝ Աստծուց լուր բերող) ձայն է լսում կտուրից, որը երկու քերովբէների միջեւ է՝ ուխտի տապանակի վրայ՝<sup>48</sup>:

Ն. Աղոնցը եւ Ս. Լիսիցիանը «անգղ»-ը համադրել են դիցաբանական կարապ թռչուն-աստուածութեան հետ (Աղոնցն՝ առաջինը)<sup>49</sup>: ի. Խ. Պետրոսեանը համարել է, որ անգղը հայոց Տորք Անգեղի կերպարանքն է, սակայն օձի (վիշապի) բնոյթով, քանի որ «անգղ» բառը սերում է հնդեւրոպական նախալեզում օձի իմաստն արտայայտող առց[հ]լ արմատից<sup>50</sup>: Նրա այս տեսակէտը փաստում է նաեւ հնագիտական նիւթով: Իրանական Պերսեպոլիսի քանդակներից մէկում հայերն ընծայ են մատուցում պարսիկներին: Ընծան սափոր է կամ սափորի մէջ է, որի կանթերն անգղագլուխ վիշապներ են<sup>51</sup>: Կողովի ունկն էլ հին հայերէնում «անգղը» կամ «անկղ» է կոչուել<sup>52</sup>: Բ. Առաքելեանը խօսում է աքեմենեան տիրապետութեան շրջանի մի ծիսանօթի (ռիտոն) մասին, որը թէեւ այծագլուխ վիշապաքաղ է, սակայն նաեւ թռչնային

<sup>47</sup> ՂԱՆԱԼԱՆՆԱՆ Ա. Տ., Աւանդապատում, Եր., 1969, էջ 142:

<sup>48</sup> MHM. T. II, c. 427, 589.

<sup>49</sup> ADONZ N., Tarkou cher les anciens Arméniens – Revue des etudes Arméniens, 1927, v. 7, fasc. 1, p. 187. Лисициан С. С., Армянские старинные пляски, Ер., 1983, с. 20.

<sup>50</sup> Петросян, с. 98-99.

<sup>51</sup> Հայ ժողովրդի պատմութիւն, Հայ. Ա, Եր., 1971, էջ 451:

<sup>52</sup> Նոր բառգիրք հայկակեան լեզուի, Հայ. I, էջ 127:

կոր թեւեր ունի<sup>53</sup>: Իրանի Ամուղարիական գանձարանից գըտնուած մի ծիսանօթ ներկայացնում է միաեղջիւր անգղի, որի վերջաւորութիւնը (բուն անօթը) վիշապի մարմին է: Արեւելեան իրանից յայտնաբերուած նոյնանման մի ծիսանօթի տեսքն արդէն անգղի է, որ կարապի թեւեր ունի: Անօթի վերին եզրում պատկերուած են տեսարաններ յունական դիցաբանութիւնից, ինչն իրանում հելլենական արուեստի ծաղկման մասին է վկայում<sup>54</sup>:

Ռ. Գրեյվսը յունական դիցաբանութեան մէջ Կիկոս-կարապի մահը կապում է ամառային արեւադարձի հետ, երբ հելլենական արուեստում կարապի մէջքին կամ կարապներ լծած կառքի մէջ պատկերուող Արեւ-Ապոլոնը հեռանում էր Հիպերբորեացիների երկիր: Ուստի, Կիկոսի սպանութեան ենթատեքստում Արեւի մահուան գաղափարն է ընկած<sup>55</sup>: Արեւի ծնունդը պատկերացուել է ձմեռային արեւադարձին՝ Այծեղջիւր համաստեղութիւնում (Դեկտեմբեր): Հայկական ժողովրդական «Աղամի ծաղիկը» հէքիաթում Արեւհատ անունով մի աղջիկ Փոքր Արարատ լեռան մէջ հանդիպում է հազիւ չնչող հերոսին, որը գիշերն աշխուժանում եւ ոտքի է կանգնում: Դրանից ուժեղ լուսաւորութիւն է տարածում, բազմաթիւ ճրագներ են վառւում, որոնք, ի հարկէ, այլ բան չեն, քան լուսնի շուրջ փայլատակող աստղերը: Ժայռի մէջ փակուած հերոսը գիշերը Լուսին դարձող որսորդ Արեւ Մանուկն (կամ Աղամը) է, որն անիծուած է եւ նոյնանում է որսի ելած ու Մասիսի ծերպերում հօր անէծքով փակուած հայոց Արտաւազդին եւ Փոքր Մհեր-Միհրին: Որսի աստուած էր նաեւ փոկիւգիացիների մէջ Սաբազիոս կոչուած Դիոնիսոսը, որը հայերին, ըստ Ն. Մառի, ծանօթ էր Ասուատ, իսկ սուաններին՝ Աֆսադ անուններով<sup>56</sup>:

Հստ Մովսէս Խորենացու, Մասիսի կիրճերում շղթայուած Արտաւազդն ուզում էր դուրս գալ եւ աշխարհի վերջը տալ:

<sup>53</sup> ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ. Ն., Դիտողութիւններ վիշապաբադ Վահագնի մասին («Տեղեկագիր Հայկական ՍՍԸ գիտութիւնների ակադեմիայի. Հասարակական գիտութիւններ», Եր., 1951, էջ 76-77:

<sup>54</sup> Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, рис. 121, 124.

<sup>55</sup> Грейвс, с. 487.

<sup>56</sup> Mapp H. Я., Фрако-армянский Sabadios-aswat и сванское божество охоты («Известия Императорской академии наукъ»), Ст. Петербург, 1912, с. 827-830.

Նրա երկու շները կրծում էին շղթաները, որ ազատութիւն տան իրենց տիրողը, սակայն դարբինների կռանահարութեան ձայնից շղթաներն ամրանում էին<sup>57</sup>: Ուրեմն, ձմեռուայ Արեւ Արտաւազդ-Միհրի՝ ժայռում փակուած մնալու ժամկէտը հսկողն էլ Դարբին-Անգղն է եղել:

Աշխարհն աւերուելու պատկերացումը կապուած է բարելոնեան աստղագիտութիւնից յայտնի Մեծ կամ Համաշխարհային տարուայ հասկացութեան հետ, որի համաձայն, մոլորակները Տիեզերքում որոշակի ժամանակ անց (նշում են տարբեր ժամկէտներ՝ 120 հազարից մինչեւ 2 միլիոն 60 հազար տարի) յայտնուում են նոյն դիրքում, ինչ եղել են աշխարհի արարման պահին: Դրա հետեւանքը կամ համաշխարհային ջրհեղեղն է, կամ էլ աշխարհի հրդեհումը<sup>58</sup>: Այդ պատճառով էլ ժայռի մէջ փակուած հերոսն աշխարհակործան ուժ է ընկալուում: Նա ՚իր կապանքները կտրելով, կործանելու է աշխարհը, սակայն Դարբին-Անգղը խանգարում է նրան: Այդպիսին է ոչ միայն Արտաւազդը, այլեւ «Վասնայ ծոեր» էպոսի Փոքր Մհերը, որը նստած է Մհերի դուռ կոչուած քարայրում եւ հետեւում է աշխարհի բախտը տնօրինող Ճախրի Ֆալաք անիւի (աստղային երկնքի) պտոյտին: Հէնց պտոյտը դադարի՝ Մհերը կ'ազատուի, դուրս կը գայ քարայրից եւ աշխարհը կ'աւերի<sup>59</sup>:

Մհերի կերպարի մի տարբերակն է Կովկասեան լեռներին գամուած, ըմբոստ Պրոմեթեւսը, որի լեարդը Զեւսի հրամանով կտցում էր արծիւը<sup>60</sup> (որն է թէ՝ անգղը): Պատահական չէ, որ Պրոմեթեւսին էլ ժայռին գամողն, ըստ հսքիլէսի, դարբին Հեփեստոսն է<sup>61</sup>, արծուի կամ անգղի կրկնակը: Պատահական չէ նաեւ այն, որ Թովմա Արծրունին էլ, ինչպէս վերեւում ասացինք, Պրոմեթեւսին Լուսնի հետ է նոյնացրել, որը նոյն ձմեռուայ Արեւ, գիշերը Լուսին դարձող Միհրն է:

Սակայն Մեծ տարուայ դադափարի հետ չէ միայն, որ կապուած է Մհերի կալանումը կամ մեկուսացումը ժայռի մէջ: Նա

<sup>57</sup> ԽՈՐԵՆԱ.81, Բ, 4ա:

<sup>58</sup> Саплин, с. 97-98.

<sup>59</sup> ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆ8, էջ 88:

<sup>60</sup> Грејвс, с. 107.

<sup>61</sup> ԷՍՔԻԼՈՍ, Պրոմեթեւսը շղթայուած («Հին յունական ողբերգութիւններ»), Եր., 1990, էջ 147-150:

փակուած է ժայռում, որովհետեւ, ըստ Հին տոմարագէտ աստղաբաշխների, «փակում», «մեկուսացում» «տարագրում» կամ «էքսիլ» է (լատիներէն՝ exilium՝ աղքատ, նուազուն, թարշամած, թալկացած բառից) կոչուել Լուսնի դիրքն Այծեղջիւրում (Դեկտեմբերին), որտեղ նրա ազդեցութիւնը բախտացոյցի վրայ նուազագոյնի է հասնում, ի տարբերութիւն իր Հետ 180 աղեղնային աստիճանի ընդդիմութիւն կազմող Խեցգետին համաստեղութեան (այստեղ էր ամառային արեւադարձի՝ Արեւի «մահուան» կէտը Յունիսին), որը Լուսնի տունն է եւ ուր նրա ազդեցութիւնը հակադարձ համեմատական է Այծեղջիւրին, այսինքն՝ ուժեղ է<sup>62</sup>: Միջնադարեան հայ տոմարագէտ Անանիա Շիրակացին նոյնպէս Խեցգետինը Լուսնի տունն է համարել<sup>63</sup>: Ուրեմն, Այծեղջիւրում Արեւ Մանուկ-Միհրը նուազած Արեւ է, որը գիշերն է միայն կենդանանում՝ Լուսնի կերպարանքով:

Հէքիսաթներում ասւում է, թէ Արեւհատն Արեւ Մանուկի մօտ է մտնում դռնով, որն իր ետեւից փակում է: Այդ դուռն, ի հարկէ, Մհերի դուռն է Վանում, որի դիրքի մասին ի. Մ. Դեակոնովը ենթադրել է, թէ պէտք է ուղղուած լինէր դէպի արեւածագ՝ գարնանային օրահաւասարի կէտը<sup>64</sup>: Հէնց այս կէտում Խոյ համաստեղութիւնում (Մարտին) պէտք է վերջնականապէս կենդանանար, յարութիւն առնէր Արեւ Մանուկ-Միհրը, որպէս գարնանային զօրացած Արեգակ:

Խեցգետնից մինչեւ Այծեղջիւր Արեւը մահուան աշխարհին է առնչում, որի խորհրդանիշը ժայռն է: «Սասնայ ծռեր» էպոսում ժայռի տեղը Մհեր-Միհրին ագռաւն է ցոյց տալիս, իսկ օրփէոսեանների ուսմունքում Արեւ Ապոլոնին կարապն է (անդղը) տանում Հիպերբօրէացիների երկիր: Կարապի մասին այն հաւատալիքը կայ, թէ նա մեռնելուց առաջ երգում է, որովհետեւ զգում է մօտալուտ հանդերձեալ աշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ագռաւին կամ անդղին, ապա երկուան էլ գիշակեր (լեշակեր) թըլուններ են եւ դրանով նոյնապէս կապուած են մեռեալների աշխարհին: Բոլոր դէպքերում էլ ձմեռուայ Արեւի նուազուն վիճակն ա-

<sup>62</sup> Саплин, с. 213-214, 169.

<sup>63</sup> ԱԹՐԱՀԱՄԵԱՆ Ա. Գ., Անանիա Շիրակացու մատևագրութիւնը («Յաղագս Կենդանատեսակաց»), Եր., 1944, էջ 329-330.

<sup>64</sup> Дьяконов И. М., К вопросу о символе Халди («Древний Восток», № 4), Ер., 1983, с. 191-192.

ղերսւում է Դարբին աստծոյ թռչնային հիպոստասներին՝ կարապին եւ անգղին։ Դեկտեմբերին՝ Ազեղիցիր համաստեղութիւնում ծընուած Արեւը թալկացած մանուկ է, որին այդ վիճակին է հասցրել Դարբին աստուածը։ Այդ է պատճառը, որ հայկական աւանդոյթներում թալկացող մանուկներին թալկացնող հիւանդութիւններով է պատուհասում։ Նա Թալլուն է, Տորք Անգեղը, Հեփեստոսը, որը ժայռին է գամում Արեւին մինչեւ Խոյ համաստեղութիւն, ուր գարնանային օրահաւասարի կէտից Արեւի զօրացումն է սկսւում։

Ինչու՞ է մանուկ Արեւին եւ, ընդհանրապէս, մանուկներին պատուհասող դարբին աստուածն անգղի կերպարանքով ըմբռոնուել։ Անգղի անկիւնածեւ կտուցը, որով նա իր զոհին է յօշուած, ամրութեամբ, կարծես, մետաղակուռ լինի, իսկ մետաղներից անկիւն ձեւացնողը դարբիններն էին, որոնք նաեւ գինք էին կուում։ Այդ պատճառով էլ արդարացուում է «անգղ» բառը հնդեւրոպական նախալեզուի *ank - arg* (ճկել, կռել, ծռել, կորացնել) արմատից ծագող *anko - lo - iñ* (հայերէնում տուել է «անկիւն» բառը) աղերսելու *q. f.* Զահուկեանի ստուգաբանութիւնը<sup>65</sup>։ Եւ քանի որ անգղն, իբրեւ գիշակեր եւ մահուան աշխարհի հետ կապուած թռչուն, քտոնիկ արարած է, ուստի, նրա անուան հիմքը կապուած է նաեւ հնդեւրոպական նախալեզուում օձի իմաստն արտայայտող *angʷ[hi]I* արմատին, ինչպէս առաջարկել է ի. Խ. Պետրոսեանը։ Այդ է պատճառը, որ Դարբին աստծոյ կերպարանքի դրսեւորումներից են եղել անգղը եւ օձը միաժամանակ, ինչպէս դա ցոյց տուեցինք վերօբերեալ հնագիտական նիւթերում։

Ցոյներն Անգղ համաստեղութեան անունը փոխելով, այնուամենայնիւ, բոլորովին մոռացութեան չին մատնել հնագոյն աստծուն։ Ճեւելիուսի աստղային քարտէզում նրա կերպարանքը կարապի կողքին է՝ Քնար համաստեղութեան մէջ, որը քնար բըռնած անգղի տեսք ունի։ Միջագետքում այս համաստեղութիւնը կոչուել է «Մեծ մայր» կամ «Մեծ բուժող» (*tau GU. LA*)<sup>66</sup>, ինչը հիմք է տալիս կարծելու, որ նրա տեղում նախապէս Մայր աստուածուհին է պատկերացուել՝ իր բուժիչ յատկանիշներով։

<sup>65</sup> Джакукин Г. Б., Хайаский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, с. 74.

<sup>66</sup> Саплин, с. 253,

Մայր աստուածուհու կերպարն ընդհանուր առասպելաբանութեան մէջ սովորաբար կապւում է տարեպտոյտի եղանակային մեռնող, յարութիւն առնող աստծոյ հետ։ Փոխւգիական Աստիսի առասպելում, օրինակ, Կիրեէ-Ազդիստիսը Զեւսի չնորհիւ յաւերժ երիտասարդ է դարձնում մեռած Աստիսի մարմինը, որի արիւնից գարնանային ծաղիկներ եւ ծառեր են աճում։ Կապւում է նաեւ լեռան հետ, որպէս նախասկզբնական քառսի ընդերքից բարձրացող երկրի խորհրդանիշ եւ Տիեզերքի ներդաշնակ կառուցուածքի ստեղծման ելակէտ։ Շումերաաքաղական ժիամաթիւ եւ Մարդուկի առասպելում այդ լեռը Մայր աստուածուհու կանգառի տեղն է<sup>67</sup>։ Լեռան մէջ է փակուած նաեւ Միհրը, հէքիաթներում Արեւ Մանուկը, որի կենդանացման համար Արեւհատ աղջիկը հեռու ճանապարհ է կտրում «Աստծոյ ծեռքէն ճուրը» բերելու։ Ճուրը նրան եկեղեցում տալիս է Աստուածամայրը։ «Հանա քեզի ուղած ճուրը, որ Յիսուս օրթիս տուվից ինծիր» («Արեւ Մանուկին հէքիաթը»<sup>68</sup>)։ «Օձեմանուկ, Արեւմանուկ» հէքիաթում<sup>69</sup> այդ ջուրն Արեւի լուացած ձեռքերի ջուրն է, որն աղջկան Արեւի մայրն է տալիս, այսինքն՝ Մայր աստուածուհին։ Նա մեռնող եւ յարութիւն առնող աստծուն բուժողի դերում է երեւան գալիս։ Այդ պատճառով էլ Խորենացին Դարբնաց քարի Անահիտի «պղծութեան ախտերում», այսինքն՝ ծէսերում գործածուող ինչ-որ դեղի մասին է խօսում, որը դարբիններն առնելով, «ահաւոր հրաշիլք արհալիքս» էին գործում։ Իսկ դարբիններն Արեւին ժայռին գամողն են կամ ժայռի մէջ կալանողը։ Նրանք նաեւ գարնանամուտին Արեւին ազատ արձակողն են, քանի որ գարնանային օրահաւասարին նուիրուած տօնին էին Միջերկրական ծովի ափերին պարում Մայր աստուածուհու սրբազն թուչնի՝ կաքասի (դարբնի) պարը։ Գարնանամուտին էր կենդանանում Աստիսը։ «Աղամի ծաղիկը» հէքիաթում Արեւ Մանուկին իր թաշկինակով կենդանացնողը Յիսուս Քրիստոսից ուղարկուած Պօղոս առաքեալն է, այսինք՝ սուրհանդակը, որ դարբնի կոչումն ու առաքելութիւնն է։ Հայոց Մաղկազարդի գարնանային տօնին յաջորդող Աւագ շաբաթուայ ուրբաթօրը Զաւախքում դարբինները գիշերը մէկ ոտքի վրայ կանգնած

<sup>67</sup> Мифы народов мира, т. I, с. 179-180, 124.

<sup>68</sup> ՊԱՏԿԱՆԵԱՆ Ռ., Երկասիրութիւններ, հա. III, Պետերբուրգ-Դոն-Ռոստով, 1904, էջ 217.

<sup>69</sup> ՄՐՈՒԱՆՁԵԱՆՑ, էջ 490.

(«կաղալով») կեռ երկաթներ (լուսնի խորհրդանիշ) էին պատրաստում, որոնք յետոյ կարտում էին մանուկների ուսերին, որպէս չարխափաններ<sup>70</sup>: Թւում է, թէ Խորենացին նոյնպէս Դարբնաց քարում գարնանամուտի տօն է նկարագրում, որի մասնակիցները դարբիններն էին:

Ժայռում կալանուած Արեւի ազատ արձակուելու ժամկէտը որոշողը Մայր աստուածուհին է համարուել, քանի որ նա նաեւ լուսնի մարմնաւորումն է, որով ժամանակն էր հնում չափում: Մօտաւոր ճշգրտութեամբ, գարնանային օրահաւասարի օրը (եւ առհասարակ, բոլոր օրահաւասարներին եւ արեւադարձերին) Լուսինը մէկեւկէս օր անհետանում է երկնքից, ապա ծագում է նորալուսնի տեսքով<sup>71</sup>: Հէնց այս երեւոյթն էլ լուսնաարեգակնային տոմարում միջոց է ծառայել գարնանային օրահաւասարի օրը որոշելու համար: Մարտ ամսին նորալուսնի ծագումն Արեւի գօրացման տօնը՝ տարեմուտը սկսելու ազդանշան է ծառայել: Այդ Արեւը ժայռում փակուած Միհրն է, իսկ նրան գօրացնողը՝ Լուսին Մայր աստուածուհին:

### ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ

<sup>70</sup> ԽԱՌԱՏԵԱՆ-ԱՌԱՔԵԼԵԱՆ ՀՐ., Հայ ժողովրդական տօները, ԵՐ., 2000, էջ 118:

<sup>71</sup> ԱՂԱՅԵԱՆ Է., Ակնարկներ հայոց տոմարների պատմութեան, ԵՐ., 1986, էջ 11: